ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի հունիսի 6-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-306-19.04.2018-ՊԻՄԻ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդված	Հոդվածում «1998 թվականի հուլիսի 1-ի» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը, հոդվածում «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է: Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
ՀՀ կառավարություն	2. Նախագծի 2-րդ հոդված	Հոդվածում «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է: